№ 183 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 25 (ՆՈՅԵՄԲԵՐԻ 6) 1878 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 25 (ՆՈՅԵՄԲԵՐԻ 6) № 183

ԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարա ութիւնները ընդունվում են ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

«Обзоръ» լրագրի յօդուածը։—Ներքին տեսութիւն։ Նամակ Երևանից։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Հնդկաստան։—«Մշակի» հեռագիրներ։—Յայտարարութիւններ։—Տեղեկացոյց։—Ֆելիետօն։

„ОБЗОРЪ“ ԼՐԱԳՐԻ ՅՕԴՈՒԱԾԸ

Թիֆլիսի «Обзоръ» լրագիրը նորերումս մի յօդուած է գրել մեր յայտնած մտքի դէմ, որ անդրկովկասեան Թուրքերին պէտք է ընդունել հայոց դպրոցները։

«Обзоръ» լրագիրը յայտնում է մի շատ երևելի ճշմարտութիւն, այն է որ ռուսների համար պէտք է ռուսաց դպրոցները հիմնել, հայերի համար հայոց դպրոցները, իսկ Թուրքերի համար Թուրքաց դպրոցները։

Մենք դրա դէմ ոչինչ չունենք։ Բայց մենք բոլոր ազգութիւնները և ցեղերը բաժանում ենք երկու տեսակի վրա՝ ինքնուրոյն քաղաքակրթութեան ընդունակ և ինքնուրոյն քաղաքակրթութեան անընդունակ ազգութիւնների և ցեղերի վրա։

Երևի պատճառ կայ որ մեր Թուրքերը մինչև այժմ անընդունակ եղան իրանց սեփական, գոնէ տարրական դպրոցների սիստեմը իրագործելու, էլ չենք խօսում միջնակարգ դպրոցների սիստեմի վրա....

Այո՛, երևի զանազան պատճառներ կան. բարոյական և մտաւոր անշարժութիւնը որ ծընունդ է մահմեդականութեան, Թուրքաց ազգաբնակութեան մէջ ընդունված արաբական տառերի անընդունակութիւնը ուսումը ամբոխի մէջ ժողովրդացնելու, վերջապէս ցեղական յատկութիւնները, այդ բոլորը պատճառ է եղել որ մեր Թուրք ազգաբնակութիւնը չը կարողացաւ դարերով և երևի երբէք չի կարողանայ իրագործել իր ինքնուրոյն դպրոցական համակարգութիւնը։

Մի ազգի մէջ մայրենի լեզուով դպրոցը օրգանական երևոյթ է, որ անխզելի կապ ունի ազգի պատմութեան, նրա ցեղական յատկութիւնների, լեզուի և գրականութեան հետ։ Եթէ այդ բոլորը չը կայ, արուեստական կերպով ստեղծել ջանալ օրգանական երևոյթները անկարելի է։

Բայց եթէ չէ կարելի,—միթէ այդ նշանակում է որ ազգը, կամ ցեղը պէտք է մնայ առանց որ և է ուսման.... Պէտք է մայրենի լեզուով տարրական ուսումը առանձնել,—բայց ի՞նչ կասէք եթէ այն ցեղը անկարող է իրականութեան մէջ էացնել այդ մանկավարժական արդար պահանջը.... Մեր ռուս լրագրին կը մնայ միայն հասնել հետևեալ դատողութեանը՝ լաւ է ազգը մնայ տգէտ, եթէ անընդունակ է իրագործել իր մայրենի լեզուով ուսումնարանը, քան թէ ուսում առնի օտար լեզուով։

Թուրքերը ցոյց են տալիս իրանց անընդունակ ստեղծել ուսումնարան, գրական լեզու, լրագրութիւն... բայց որովհետև մանկավարժական գիտութիւնը պահանջում է ուսում առնել մայրենի լեզուով, իսկ նրանք անընդունակ էին, են և երևի կը լինեն իրանց մայրենի լեզուն քաղաքակրթութեան գործիչ դարձնել, ուրեմն լաւ է ոչինչ չը սովորեն, քան թէ սովորեն օտար լեզուով, որովհետև օտար լեզուով սովորելը «Обзоръ» լրագրի կարծիքով նրանց կը բերթացնի։

Կան ցեղեր, որոնք ինքնուրոյն քաղաքակրթութեան անընդունակ են, ինչպէս որ կան մարդիկ որոնք ինքնուրոյն լոգիկական դատողութիւն չեն անում։ Ինչպէս մարդիկ կան որոնք ինքնուրոյն գիտնական գիւտեր չեն անում։ Ինչպէս ցեղեր կան որոնք ինքնուրոյն գրական լեզու չեն ստեղծում։ Ինչպէս ցեղեր կան որոնք ինքնուրոյն գեղեցիկ արուեստներ չեն ստեղծում։ Ինչպէս ցեղեր կան որոնք ինքնուրոյն քաղաքակրթութեան անընդունակ են

տողութեան անընդունակ են։ Բայց առաջիններին կարելի է օգտար մի որ և է քաղաքակրթութեան օգնութեամբ լուսաւորութեան նշոյլը տալ, իսկ վերջիններին ոչինչով չէ կարելի լոգիկա սովորեցնել։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

—

19 հոկտեմբերի

Ամենից շատ զզուելի են այն մարդիկը, որոնց վրա չէ ազդում ոչ բանաւոր և ոչ էլ գրաւոր խօսքը։ Դոքա անամօթ և անպատկառ են, թէև իրանց հեզ և համբերող են ձևացնում։ Դոքա թէ բաղդաւոր լինեն և թէ անբաղդ, մի և նոյն է. դոքա անբարոյական և միանգամայն փչացած մարդիկ են. այդպիսիների մասին թէ խօսելն և թէ գրելը՝ յիմարութիւն է։ Բայց երբ որ յոյս ունես թէ մէկը մոլորված է, խաբված է, ճշմարտութենից հեռացած է և գիտես որ խօսքն ու խրատը կազդէ նրա հոգու վրա, համոզված ես որ տակաւին չէ մարել նրա մէջ խղճմտանքի վերջին կայծը, այն ժամանակ բարոյապէս պարտաւոր ես նրան յուղութիւն կոչելու. պարտաւոր ես նրան ցոյց տալու իր պակասութիւնները՝ թէ քաղցր լինի խօսքերդ նրա համար և թէ դառը, այդ մի և նոյն է. միայն թէ դու հասնես քո բարի նպատակին, միայն թէ դու հասկացնես նրան ճշմարիտը։ Հասարակաց կարծիքից չը պատկառողը, կարող է ամենայն չարութիւն գործել. նա իր ասածը կանէ, իր շահը կորոնէ ամենի տեղ և ամենի մէջ։

Հասարակաց խօսքին և կարծիքին նշանակութիւն չը տվողը մերժում, հերքում է այն ճշմարտութիւնը, որ ասում է՝ «ձայն բաղմաց ձայն Աստուծոյ։» Բազմութեան ձայնը խեղդողը, բազմութեան իրաւունքն ուրացողը, ուրանում է իր խիղճը, իր Աստուածը։ Սրանց մասին գրելը աւելորդ է։ Այս է իմ համոզմունքը։ Այսպէս համոզված լինելով, ուղղում եմ իմ յօդուածները դէպի այն մարդիկը, որոնց մէջ դեռ ևս մարդկային արժանաւորութեան նշոյլ եմ ենթադրում։ Զը նայելով որ այդ մարդկանցը ես մարակում եմ, բայց ես մահվան հարուած չեմ տալիս։ Ենթադրելով որ դրանք կանգնած են մոլորութեան ճանապարհում, այդտեղից ես դրանց դուրս եմ քշում միայն հարուածելով։ Երբ որ այդ հարուածը ցաւեցնում է դրանց, ես ուրախանում եմ, որովհետև դրանով համոզվում եմ որ դրանց մէջ տակաւին զգացմունք կայ. տակաւին չեն անզգայացել և չեն մեռել բարոյապէս։ Հաւատում եմ որ հարուածից ցաւեցողները ջանք են անում այլ ևս հարուած չը ստանալ, ուրեմն զգուշանում են մոլութեան ճանապարհը մտնելուց. աշխատում են մտնել օրէնքով որոշված ուղին, ճշմարտութեան ասպարէզը։

Այս ևս գիտեմ որ մէկին ուղղելու համար հարուածը չը պէտք է առաջին և միակ միջոցը համարվի։ Ես հետևում եմ այս կանոնին թէ. «Որ ոչ լուիցէ ունկամբ, լուիցէ թիկամբ։» Ո՛վ որ գրում է այն մտքով միայն, որ խայտառակէ այս կամ այն մարդուն, այս կամ այն խմբին իր կիրքը յագեցնելու նպատակով, նա ինքն խայտառակ և գծուծ մարդ է։ Խարդախ և չարամիտ է նոյնպէս այն մարդը, որ ժողովրդի խաղաղութիւնը վրդովելու և երկպառակութիւն սերմանելու մտքով է գրում, որպէս զի խռովութիւնների մէջ որոնէ իր անձնական շահը։ Պէտք է նոյն իսկ հարուածելու և պախարակելու մէջն էլ անաչառ և ճշմարտախօս լինել։ Ուստի երբ որ մէկը կամենում է խարդախ միջոցներով կուրացնել հասարակութիւնը, երբ որ արտաքին շլացուցիչ ցոյցերով աշխատում է ծածկել իր ներքին դատարկութիւնը, այն ժամանակ, ով որ էլ լինի նա, ազգական թէ բարեկամ և թէ ծանօթ՝ այդ մի և նոյն է, պէտք է մերկացնել նրա խորամանկ հնարագործութիւնները և ցոյց տալ գործի և իրողութեան ճշմարիտ արժէքը. ահա իմ համոզմունքը, որ պէտք է լինի ամեն անկեղծ թղթակցի համոզմունք։ Այնքիս առջև չահախնդիր մարդիկ մոռանում են իրանց տգիտութիւնը անթերի գիտութեան փոխարէն, գերադասում են իրանց գծուծ անձնասիրութիւնն ու փառասիրութիւնը հասարակութեան օգտից, զոհում են հարիւրաւոր մարդոց բարեբաղդութիւնը իրանց ընչաքաղցութեան. տեսնելով այս բոլորը, կարող եմ լռել, կարող եմ անտարբեր աչքով նայել, կարող եմ կեղծաւորիլ. մինթէ անտարբերութիւնը բոլորովին անբարոյականութիւն չէր համարվի. մինթէ երկնելով կեղծաւորիլը ստարդութիւն և անազնուութիւն չը պիտի լինէր իմ կողմից։—

Ով որ ժամանակ ունի, թող մի հինգ րոպէ ուշադիր լինի մեր այսպէս անուանեալ, ազգային գործերի ընթացքին. ուր տեղ կը գտնէ արդեօք մի յուսալի վիճակ. մեր վանքերումն արդեօք, որոնք վանահայրերի սեփականութիւն են դարձել. մեր ուխտատեղերումն արդեօք, որոնք մասնաւոր մարդոց կոկորդին են ծառայում. մեր եկեղեցիներումն արդեօք, որոնց արդիւնքը պակսում է օրըստօրէ չնորհիւ դանդաղամիտ առաջնորդարանի և ընչաքաղցր երեցփոխանների ու չահամոլ իշխանների. մեր դպրոցներումն արդեօք, որոնք ոգէտ տեսուչների, իմաստակ վարժապետների և հոգեղուրկ հոգաբարձուների ձեռքում խաղալիկ են դարձել. մեր թատրոններումն արդեօք, որոնց բեմի վրա Վարդանը դառնում է մի ուղղեղ ցրված հրէշ, իսկ Շուշանիկը, Վրաստանի մի լաղար է։ Ո՞վ պէտք հոգ տանէ բարեկարգելու այս ազգային հաստատութիւնները։ Կարծիք չը կայ որ ժողովուրդը ինքն պէտք է բարեկարգելու հոգ տաներ. բայց մի լաւ նայեցէք մեր ժողովրդի վրա էլ։ Սրա կրթված ու բարձր ուսում ստացած մասը դեռ ևս անպատուութիւն է համարում իրան կլուբը, թղթախաղն ու կանձաբանութիւնը թողնել և վանքերի, եկեղեցիների, դպրոցների և սրանց նման բաների վրա մտածելը. վաճառականները և արհեստաւորները մի քանի կոպէկ դանձանակ ձգելով և կամ թէ քանի մի ռուբլ նուիրելով այս կամ այն բարեգործական հիմնարկութեան, իրանց պարտաւորութիւնը կատարած են համարում, չինովնիկներն էլ որ միայն չինովնիկներ են, էլ ով պէտք է մտածէ մեր ներքին գործերի մասին։ Բոլոր դասակարգերն էլ աչքերնին տնկում են հոգևոր իշխանութեան վրա։ Հոգևոր իշխանութիւնն էլ հրամաններ է արձակում, բայց էլ չէ հետաքրքրվում թէ արդեօք իր տուած հրամանները գործադրվեցան թէ չէ. դպրոցական կանոններ է յօրինում և հրատարակում, բայց գործադրութեան մասին ոչինչ հոգս չէ քաշում. թեմական տեսուչներ է նշանակում, բայց միջոց չէ տալիս որ այդ տեսուչները իրանց ստացած հրահանգներին համաձայն գործեն. առաջնորդներ է նշանակում, բայց էլ չէ հարցնում թէ ինչ բարիք գործեցին իրանց հօտի համար։

Մեր աշխարհականները իրանց մտաւոր և բարոյական կրթութիւնը և յառաջադիմութիւնը հոգևոր իշխանութենից են սպասում, իբր այն պատճառով որ տէրութեան և եկեղեցական օրէնքով մեր մտքի և բարոյականի կրթութեան հսկողութիւնը յանձված է նրան, իսկ հոգևոր իշխանութիւնը գտնվում է մի այնպիսի դրութեան մէջ, որից չէ կարելի, բացի լոկ հրամաններից, ուրիշ գործնական օժանդակութիւն սպասել։ Մինչև անգամ լոկ հրամաններ ստանալն էլ շատ անգամ մեծամեծ դժուարութիւնների է հանդիպում։ Փորձեցէք մի անօգուտ առաջնորդ արձակել ձեր միջից, հարիւրաւոր ստորագրութիւններով աղերսագիր ուղարկեցէք և ասացէք որ այս առաջնորդը մեր ուսումնարաններին և եկեղեցիներին՝ բացի վնասից, ոչ մի օգուտ չէ բերում, մինչև անգամ ուսումնարանների յատկացրած արդիւնքներից յայտնապէս պակասեցնելն էլ ապացուցէք, այդու ամենայնիւ դուք չէք կարող ձեր խնդրին բաւարարութիւն ստանալ, եթէ որ այդ առաջնորդը կարողացել է աթոռապատկան հոգեբաժիններն ու աթոռահարկները իւրաքանչիւր մեռելատիրոջից և պակատիրոջից՝ 3—8 ռուբլ, անպակաս ստանալ և ուղարկել ըստ պատկանելոյն։ Փորձեցէք նոյնպէս ձեր սիրած ու հաւանած մարդուն առաջնորդ խնդրել. տեսէք ինչ դժուարութիւնների կը հանդիպէք։ Փորձեցէք այս կամ այն ուսումնարանի համար մի որ և իցէ նպաստ կամ արդիւնք խնդրել կամ բնաւ չէք ստանալ և կամ թէ մի քանի անգամ հրաման կը ստանաք, բայց հրամանի կատարմանը համար հարկաւոր տնօրինութիւն չէք ստանայ։

Այսպէս, Երևանի թեմական դպրանոցի հոտարիներով ամեն օր մի գլուխ գրել.... ճշմարիտ է նրա հեղինակութիւնը դորանով աւելի երկար և աւելի էլ ձանձրալի կը դառնար,— բայց գոնէ նա այդպիսով մի բարի գործ կը գործէր, կը փրկէր մի մարդու կեանքը, և այնուհետև նրա բոմանը աշխարհի բոլոր բժշկական ակադեմիաներից կընդունվէր որպէս ամենաազդու դեղ բարակացաւի դէմ։

***

«Կուսածաղիկի» վրա խօսելով յիշեցի որ Նորբերումս մի ուրիշ հայոց գիրք էլ հրատարակվել է՝ «Ձայն բարբառոյ Հայաստանի» Ն. Առաւեղեանցի։

Կարդացի այդ գրքոյկը և ոչինչ չը հասկացայ։

***

Դարձեալ իմ տուած խօսքս չեմ կատարում և իմ ֆելետոններիս մէջ կանանց վրա բոլորովին չեմ խօսում։

Բայց ինչպէս խօսեմ հայ կանանց վրա, երբ մեր կանայք այդքան միակերպ են։ Հայուհին միայն երկու տեսակ է լինում՝ աղջիկ և պսակված կին, ուրիշ ոչինչ.... Ցանու աղջիկ և ամուսին, ահա հայ կնոջ երկու միակ հասարակական դրութիւններ....

Ուրիշ երկիրներում կան դերասան կանայք, գրող կանայք, ուսուցիչ կանայք, վաճառական կանայք, կապարանող կանայք, սիրուհի կանայք, գիտնական կանայք, բժիշկ կանայք և այն և այլն.... Ամեն երկրում կան մեծ-աշխարհի կանայք, կէս-աշխարհի կանայք, քառորդ-աշխարհի կանայք, բուրժուա կանայք, և այլն....

Իսկ մեզանում պակված կանայք պսակված են, իսկ օրիորդները սպասումեն պակվելուն։

Այո՛ սպասումեն մինչև որ մի երիտասարդ, կամ պառաւ մարդ (փոյթ չէ ով լինի) գայ ու առաջարկի իր սիրտը, իր ձեռքը ու մանաւանդ իր քսակը։ Սպասում են և չնորհ չունին մինչև անգամ որսալ։

Հայ երիտասարդները զզվելով որ հայ օրիորդները չնորհ չունեն որսալ կամ սիրել (որ մի և նոյնն է) չնորհ չունեն իրանց սիրել տալ, զզվելով հայ կանանց տեսակների միակերպութիւնից, զզվելով սև աչքեցից և սև մազերից, ընկել են կապոյտ աչքերի և խարտեաշ մազերի ետևից, սկսում են պսակվել օտարուհիների հետ։

Գոնէ եթէ պսակվում են օտարուհիների հետ, օրինաւոր կանանց հետ պսակվէին։ Բայց այդ էլ չեն անում։ Նորերումս մի հարուստ հայ Թիֆլիսցի երիտասարդ գնացել է Վ. քաղաքը և այնտեղ նշանվել է մի օտար կնոջ հետ, որին ամբողջ Թիֆլիսը ճանաչում էր....Ասում են որ էլ չի վերադառնայ մեր քաղաքը։

Ձեր հախն է, հայ քնքոյշ, բայց անչնորհ օրիորդներ. ձեր ձեռքից թողնում էք հայ երիտասարդներին, իրանց կարողութիւնն էլ ձեր ձեռքից փախցնել էք տալիս գործին աւելի վարժ օտարուհիներին....

***

Հայ օրիորդները երկու ծայրայեղութիւն են ներկայացնում. մեր օրիորդը կամ կրաւորական, իր կամքը չունեցող, անբան էակ է, որին ծնողները զուքված, զարդարված ապրանքի պէս առնողին են ցոյց տալիս, կամ եթէ անկախ աշխատանքով ապրող օրիորդ է,—չափից դուրս սառը և հրպարտ է լինում։

Պսակվելու նպատակով փեսացուներ որսալը առանձին արհեստ է, որ բոլորովին անյայտ է մեր օրիորդներին։

Կաշխատեմ ծանօթացնել մեր օրիորդներին այդ արհեստի տարրական սկզբունքների հետ։

Մի օրիորդ տանն է նստած։ Գալիս է մի հիւր (ով և լինի նա)։ Օրիորդը հէնց որ իմանում է թէ երիտասարդը պսակված չէ, սկսում է նրա վրա ճակատի տակից կրակոտ հայեացքներ գցել, բայց հէնց որ երիտասարդը նրա վրա նայում է, օրիորդը ուրիշ կողմ է դարձնում իր հայացքը։ Խօսելու ժամանակ օրիորդը պէտք է ցոյց տայ թէ սաստիկ հետաքրքրվում է այն պարապմունքով, որ երիտասարդի մասնագիտութիւնն է....Եթէ երիտասարդը զինուորական է, օրիորդը հարցնում է՝

—Ես չեմ հասկանում, ինչպէս կարելի է կրակի առաջ կանգնել։ Ես կը մեռնէի ահից։ Երևի սարսափելի բան է։

Երիտասարդը սկսում է հաւատացնել, որ այնքան սարսափելի բան չէ, որ մահվան դաղափարին էլ կարելի է ընտելանալ, և այլն։

—Ես ոչինչ աւելի ազնիւ չեմ ճանաչում, քան թէ իր արիւնի գնով պաշտպանել հայրենիքը, ասում է օրիորդը, խոր կերպով ախ քաշելով և կրակոտ աչքերով նայելով երիտասարդի վրա։

Ցետոյ փոքր առ փոքր խօսքը իր դրութեան վրա դարձնելով օրիորդը պէտք է ճարպիկ կերպով ակնարկի թէ ինքն մի տեսակ զոհ է ընտանիքում, թէ իր ամբողջ կեանքը ծնողների, փոքր եղբայրների և քոյրերի համար զոհաբերութիւն է եղել....և այլն....

Երիտասարդը հիացած տուն է վերադառնում....

—Ինչ հայեացքներ էր գցում նա ինձ վրա, ասում է նա տուն վերադարձած և իր սենեակում մեծ քայլերով մանգալով։ Եւ ինչպէս խելացի և ազդասէր աղջիկ է....Ինչպէս բարձր զգացմունքներ ունի նա։ Խեղճ, նա կատարեալ զոհ է իր ընտանիքում։ Բայց ինչպէս մտերիմ է նա ինձ հետ։ Դեռ նոր եմ ծանօթացել ես նրա հետ, և նա ինձ իր սրտի բոլոր գաղտերը պատմել է։ Մինթէ նա ինձ հաւանում է....

Միւս օրը երիտասարդը կրկին վազում է նոյն տունը։

Բայց մինչև նրա գալը արդէն մի երիտասարդ բժիշկ է եղել նոյն տանը։

—Մինթէ դարձեալ վիզիտներ ունէք, պ. բժիշկ, ասաց օրիորդը, մնացէք մեզ մօտ ճաշի, մայրս շատ ուրախ կը լինի։

—Ցաւում եմ շատ, բայց չեմ կարող, սիրելի օրիորդ, պատասխանում է բժիշկը։

—Ա՛խ, ինչպէս դուք դաղրում էք երևի....Եւ ինչ ծանր, սպանող, բայց դեղեցիկ աշխատանք է բժիշկ լինելը։ Ես ուրիշ այդ տեսակ աշխատանք չեմ ճանաչում։ Զինուորականը այդ պաշտպանում է հայրենիքը, բայց մի և նոյն ժամանակ մարդիկներին է սպանում, իսկ բժիշկը հիւանդների, տկարների վրա է հոգում, մեռնողներին կրկին կեանք է չնորհում....Ի՜նչ ազնիւ պարապմունք....

Եւ բժիշկը հիացած դուրս է գալիս տանից և իր կառքի մէջ նստած ինքն իրան ասում է՝ ահա այն կինը, որ ինձ հարկաւոր է....նա հասկանում է, գնահատում է ինձ, գնահատում է իմ մասնագիտութիւնը դեռ աղջիկ ժամանակ, որքան աւելի կը գնահատի նա ինձ, երբ կինս կը դառնայ։ Պէտք է նրան առաջարկութիւն անեմ....

Անցնում են մի քանի ժամեր։ Օրիորդի մօր մօտ գալիս է մի ադվոկատ։

—Մայրս տանը չէ, ասում է օրիորդը, ինչ կը հրամայէք որ նրան ասեմ, կամ եթէ կամենում էք սպասել, նա մի կէս ժամից յետոյ կը վերադառնայ։

—Շատ լաւ, օրիորդ, ես կը սպասեմ։

Եւ ահա սկսվում է խօսակցութիւնը։

—Monsieur Փաստաբանեանց ես մի բան էի ուզում հարցնել ձեզանից, բայց վախենում եմ....

—Ի՞նչ կը հրամայէք, օրիորդ, ասացէք խնդրեմ....

—Ես շատ կը կամենայի լսել ձեր պաշտպանողական ճառերից մինը նահանգական դատարանում, բայց չը գիտեմ դուք թոյլ կը տաք թէ ոչ, և որ ժամին են լինում նիստերը դատարանում։

—Ա՛խ, օրիորդ, ես իրաւունք չունեմ չը թոյլ տալ։ Ես հրապարակապէս խօսում եմ։ Բայց եթէ կամենաք, ես մեծ ուրախութեամբ ձեզ իմաց կը տամ երբ մի հետաքրքիր գործ կը լինի և եթէ թոյլ տաք, ինքս կը բերեմ ձեզ մի տոմսակ....

—Շատ չնորհակալ եմ, ասում է օրիորդը կարմրելով։

—Մինթէ դուք այդքան սիրում էք դատարանում լինելը։

—Այո՛, ես չը գիտեմ, ինձ թվում է որ ադվոկատութիւնից աւելի ազնիւ պարապմունք չը կայ աշխարհիս երեսին. պաշտպանել որբերին, անմեղներին, անգիտակցական կերպով յանցանք գործողներին....և այդ բոլորը գեղեցիկ, ճարտար խօսքերով....

Ադվոկատը օրիորդի տանից հիացած է դուրս գալիս։

Մի քանի ժամից յետոյ մտնում է մի դերասան....

Օրիորդը գցում է նրա վրա մի քնքոյշ հայեացք, բայց թողնում է իր խօսակցութիւնը նրա հետ, մինչև որ պակված լինի....

Մի չաբաթից յետոյ զինուորականը, բժիշկը և փաստաբանը առաջարկութիւն են անում օրիորդին։

—Ես ոչինչ աւելի ազնիւ չեմ ճանաչում, քան թէ իր արիւնի գնով պաշտպանել հայրենիքը, ասում է օրիորդը, խոր կերպով ախ քաշելով և կրակոտ աչքերով նայելով երիտասարդի վրա։

Ցետոյ փոքր առ փոքր խօսքը իր դրութեան վրա դարձնելով օրիորդը պէտք է ճարպիկ կերպով ակնարկի թէ ինքն մի տեսակ զոհ է ընտանիքում, թէ իր ամբողջ կեանքը ծնողների, փոքր եղբայրների և քոյրերի համար զոհաբերութիւն է եղել....և այլն....

Երիտասարդը հիացած տուն է վերադառնում....

—Ինչ հայեացքներ էր գցում նա ինձ վրա, ասում է նա տուն վերադարձած և իր սենեակում մեծ քայլերով մանգալով։ Եւ ինչպէս խելացի և ազդասէր աղջիկ է....Ինչպէս բարձր զգացմունքներ ունի նա։ Խեղճ, նա կատարեալ զոհ է իր ընտանիքում։ Բայց ինչպէս մտերիմ է նա ինձ հետ։ Դեռ նոր եմ ծանօթացել ես նրա հետ, և նա ինձ իր սրտի բոլոր գաղտերը պատմել է։ Մինթէ նա ինձ հաւանում է....

Միւս օրը երիտասարդը կրկին վազում է նոյն տունը։

Բայց մինչև նրա գալը արդէն մի երիտասարդ բժիշկ է եղել նոյն տանը։

—Մինթէ դարձեալ վիզիտներ ունէք, պ. բժիշկ, ասաց օրիորդը, մնացէք մեզ մօտ ճաշի, մայրս շատ ուրախ կը լինի։

—Ցաւում եմ շատ, բայց չեմ կարող, սիրելի օրիորդ, պատասխանում է բժիշկը։

—Ա՛խ, ինչպէս դուք դաղրում էք երևի....Եւ ինչ ծանր, սպանող, բայց դեղեցիկ աշխատանք է բժիշկ լինելը։ Ես ուրիշ այդ տեսակ աշխատանք չեմ ճանաչում։ Զինուորականը այդ պաշտպանում է հայրենիքը, բայց մի և նոյն ժամանակ մարդիկներին է սպանում, իսկ բժիշկը հիւանդների, տկարների վրա է հոգում, մեռնողներին կրկին կեանք է չնորհում....Ի՜նչ ազնիւ պարապմունք....

Եւ բժիշկը հիացած դուրս է գալիս տանից և իր կառքի մէջ նստած ինքն իրան ասում է՝ ահա այն կինը, որ ինձ հարկաւոր է....նա հասկանում է, գնահատում է ինձ, գնահատում է իմ մասնագիտութիւնը դեռ աղջիկ ժամանակ, որքան աւելի կը գնահատի նա ինձ, երբ կինս կը դառնայ։ Պէտք է նրան առաջարկութիւն անեմ....

Անցնում են մի քանի ժամեր։ Օրիորդի մօր մօտ գալիս է մի ադվոկատ։

—Մայրս տանը չէ, ասում է օրիորդը, ինչ կը հրամայէք որ նրան ասեմ, կամ եթէ կամենում էք սպասել, նա մի կէս ժամից յետոյ կը վերադառնայ։

—Շատ լաւ, օրիորդ, ես կը սպասեմ։

Եւ ահա սկսվում է խօսակցութիւնը։

—Monsieur Փաստաբանեանց ես մի բան էի ուզում հարցնել ձեզանից, բայց վախենում եմ....

—Ի՞նչ կը հրամայէք, օրիորդ, ասացէք խնդրեմ....

—Ես շատ կը կամենայի լսել ձեր պաշտպանողական ճառերից մինը նահանգական դատարանում, բայց չը գիտեմ դուք թոյլ կը տաք թէ ոչ, և որ ժամին են լինում նիստերը դատարանում։

—Ա՛խ, օրիորդ, ես իրաւունք չունեմ չը թոյլ տալ։ Ես հրապարակապէս խօսում եմ։ Բայց եթէ կամենաք, ես մեծ ուրախութեամբ ձեզ իմաց կը տամ երբ մի հետաքրքիր գործ կը լինի և եթէ թոյլ տաք, ինքս կը բերեմ ձեզ մի տոմսակ....

—Շատ չնորհակալ եմ, ասում է օրիորդը կարմրելով։

—Մինթէ դուք այդքան սիրում էք դատարանում լինելը։

—Այո՛, ես չը գիտեմ, ինձ թվում է որ ադվոկատութիւնից աւելի ազնիւ պարապմունք չը կայ աշխարհիս երեսին. պաշտպանել որբերին, անմեղներին, անգիտակցական կերպով յանցանք գործողներին....և այդ բոլորը գեղեցիկ, ճարտար խօսքերով....

Ադվոկատը օրիորդի տանից հիացած է դուրս գալիս։

Մի քանի ժամից յետոյ մտնում է մի դերասան....

Օրիորդը գցում է նրա վրա մի քնքոյշ հայեացք, բայց թողնում է իր խօսակցութիւնը նրա հետ, մինչև որ պակված լինի....

Մի չաբաթից յետոյ զինուորականը, բժիշկը և փաստաբանը առաջարկութիւն են անում օրիորդին։

գաբարձութիւնը երեք տարի է որ երեք անգամ հրաման է ստացել բարձրագոյն իշխանութենից որ Նորագաւթի, Ալափարսու և Նորքա Աստուածածնի ուխտատեղիներից գոյացած արդիւնքը, նոյնպէս Երևանի հինգ եկեղեցիների գումարից տոկոսիքը և թեմիս մէջ եղող իւրաքանչիւր պակից 50 կոպէկ սեմինարիային յատկանայ. բայց բացի քաղաքիս երկու եկեղեցիների երեցփոխաններից ու Կոտէից գաւառի գործակալից, ոչ ոք մինչև ցայսօր, ըստ ասութեան նոյն հոգաբարձուների, չէ բարեհաճել լսելու բարձրագոյն հրամանը։ Հարցն այս է. եթէ որ յիշեալ արդիւնքը գնալու լինէր էջմիածին, այն ժամանակ էլ հոգևոր վարչութիւնը կը տանէր այլ զանցառութիւնները. ի հարկէ չէ։ Ուրեմն ո՞վ պէտք է յիշեալ հրամաններին ընթացք տայ, եթէ ոչ նոյն իսկ հոգ. իշխանութիւնը իր հեղինակութեամբ եթէ ցանկանայ միայն։ Ո՞վ պէտք է ազգային գործերին ընթացք տայ, այդ էլ յայտնի չէ։

Հին-Բարեկամ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Հաստատ աղբիւրներից լսում ենք որ ԹԻՖԼԻՍԻ մէջ գտնվող Արծրունու գալէրէում (Դվորցովի փողոցի վրա), այդ շինութեան տերերը դիտատաւորութիւն անեն կառուցանել մի կոնցէրտական կամ թատրոնական դահլիճ։ Դահլիճը կը պարունակի իր մէջ 400 հանդիսականներ։ Հետզհետէ կը հաղորդենք այդ շինութեան մասին մանրամասներ։

—

Հոկտեմբերի 22-ին և 23-ին ԹԻՖԼԻՍԻ Մուշտայիդ այգու կողմը գտնված գաչտի վրա եղաւ ձիարշաւ (սկաչկա)։ Մասնակցում էին ձիարշաւին թէ տեղական և թէ կօզակների ձիերը։

—

Մեզ հաղորդում են, որ ԹԻՖԼԻՍԻ Ներսիսեան դպրոցի համար նշանակված տեսչի պաշտօնակատար պ. Ա. Նահապետեանը ունի Ներսիսեան դպրոցում 16 դաս, Գայանեան օրիորդաց միջնակարգ ուսումնարանում 6 դաս, իր սեփական «Մանկական պարտէզի» մէջ 6 դաս և բացի այդ մասնաւոր տներումն էլ մի քանի դասեր։ Եթէ մեզ հաղորդած այս լուրերը պ. Ա. Նահապետեանի ծանր պարապմունքի մասին ճիշտ են, ցանկալի կը լինէր իմանալ պ. պաշտօնակատարը գարձեալ ունենալու է այդ դասերը։ Թէ ոչ, և եթէ կը թեթեացնէ իր պարապմունքը, ինչ ձևով։ Մեզ ցանկալի կը լինէր այդ դործի վերաբերութեամբ մանրամասն և հաստատ տեղեկութիւն ստանալ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀՆԴԿԱՍՏԱՆ

«Times» լրագրին Հնդկաստանի քաղաքների մէկից գրում են հետևեալը։

«Օրական նշանաւոր անցքը այժմ համարվում է Հնդկաստանի փոխարքայի լրաբերի վերադարձը Աֆգանիստանից։ Լրաբերի բերած նամակի բովանդակութենից կախված է պատերազմի լինելը կամ չը լինելը։ Մինչև այժմ հասարակութեանը յայտնի չէ էմիրի նամակի բովանդակութիւնը, բայց արժանահաւատ աղբիւրներից հաղորդումն, որ էմիրը ցանկանում է համաձայնվել անգլիական կառավարութեան հետ։ Տեղական լուրերին նայելով էմիրը, չընայելով որ հրաժարվեց ընդունել անգլիական դեսպանութիւնը, այնուամենայնիւ ցանկանում է անձամբ տեսնվել Պեշավերի մէջ Հնդկաստանի փոխարքայի հետ։ Հնդկաստանի լրաբերի յետ ուղարկելը այնպիսի ժամանակ, երբ Աֆգանիստանի սահմանների վրա պատերազմական պատրաստութիւններ են տեսնվում, ապացոյց է, որ էմիրը ցանկանում է համաձայնութիւն կայացնել, որպէս զի սարսափված չը լինի պատերազմել Անգլիայի հետ։ Էմիրը արևելեան բոլոր բռնակալ իշխանների նման պատրաստ չէ հարկաւոր եղած ժամանակ սկսել պատերազմական գործողութիւնները՝ այդ պատճառով շատ կարելի է, որ նա մի քանի զիջումներ անի ժամանակ վաստակելու համար։ Պատերազմական գործողութիւնների յետաձգելը մինչև ձմեռ նրան միջոց կը տայ թէ պատրաստել իր զօրքերը և դաշնակցութիւն կապել իր Փանատիկոս ցեղակիցների հետ։ Դեռ այժմ էմիրը աշխատում է սրբազան պատերազմ սկսել և նրա մի քանի ցեղակից մահմեդականները նրա դրօշակի տակ են կանգնել։ Ինչ տեսակ էլ լինեն Շիր-Ալիի դիպլոմատիական և պատերազմական դիտաւորութիւնները, նոքա ոչինչ ազդեցութիւն չեն կարող ունենալ Հնդկաստանի կառավարութեան խելացի և մտածված վճիռների վրա։ Պատերազմը անփախչելի է Հնդկաստանի և Աֆգանիստանի մէջ։ Միակ բան, որ կարող է պատերազմի առաջն առնել, այդ էմիրի անպայման հնազանդութիւնն է։ Հնդկաստանի կառավարութիւնը բոլորովին մտադիր չէ ձմեռը պատերազմել. գործը յետաձգված է մինչև գարունք։ Այս ժամանակամիջոցի մէջ Հնդկաստանի կառավարութիւնը կարող է մի կողմից բանակցել էմիրի հետ, միւս կողմից այնպէս լաւ պատրաստվել պատերազմի համար, որ անպատճառ յաղթող հանդիսանայ և մի և նոյն ժամանակ որքան կարելի է քիչ մարդիկ կորցնէ։ Սահմանից եկած վերջին տեղեկութիւններից երևում է, որ էմիրը կենտրօնացրել է Ալիմսուվիդում մօտ 26,000 զինուոր, որ նա մի քանի ցեղերի հետ համաձայնվել է, իսկ միւսները թշնամական դիրք են ընդունել Շիր-Ալիի վերաբերութեամբ։ Էմիրի ոյժերին Հնդկաստանի կառավարութիւնը ահագին քանակութեամբ զօրքեր է ընդդիմադրում. բաւական է այժմ ասել, որ զօրաբաժինը երեք հարիւր յիսուն հազար զօրքերից է կազմված։ Այդպիսի երեք զօրաբաժին է պատրաստված։ Բացի այս քաղաքները ամրացած են և զօրքերով լցրած, ճանապարհները ուղղվում են և նոր ճանապարհներ են շինվում։ Հնդկաստանի կառավարութիւնը ամեն կերպ աշխատում է, որ ապագայ պատերազմի նախագիծը գաղտնի մնայ, որովհետև էմիրի լրտեսները ամեն տեղ գտնվում են։

Նոյն հարցի մասին «Daily News» լրագրին Սիմլայից գրում են. «Պատերազմը Աֆգանիստանի հետ անփախչելի է էմիրի ուղարկած պատասխանի յանդուգն բովանդակութեան պատճառով։ Հազիւ թէ կարելի է համբերել այսպիսի նախադասութիւնները «ինչ ուզում եք կարող եք անել, բայց վերջը Աստուծու ձեռքին է»։ Հնդկաստանի կառավարութիւնը շատ լաւ հասկանում է, թէ ինչ վատ հետևանքներ կարող է ունենալ մի սխալ քայլը։ Այդ պատճառով պատերազմական գործողութիւնների յետաձգելը խելացի կարգադրութիւն է համարվում, չը նայելով որ անհամբեր մարդիկ այդ կարգադրութենից բաւական չեն։ Ձմեռվայ ընթացքում կարելի է շատ բան անել։ Գեներալ Ստիւարտ Նորերումն եկաւ Անգլիայից։ Նա խորհրդակցում է փոխարքայի և գլխաւոր հրամանատարի հետ։»

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐԱԻԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԴ, 24 հոկտեմբերի։ Պետական բանկի 5% տոմակը առաջին շրջանի արժէ 96 ր. 62 կ., երկրորդ 95 ր. 50 կ., երրորդ 95 ր. 50 կ., չորրորդ 95 ր. 50 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմակը արժէ 234 ր. 75 կ., երկրորդ 228 ր. 75 կ., արևելեան 92 ր. 37 կ., ոսկի 8 ր. 25 կ.։ Ռուսաց 1 ռուբլ Լօնդոնի վրա արժէ $23^{13}/_{16}$ պէնս։ Տրամադրութիւնը թոյլ է։

Նա կարող է ընտրել։

Պակվելուց յետոյ նա կը ծանօթանայ արհեստագէտների, դերասանների, երաժիշտների, գրողների հետ։ Այդ տեսակների հետ պակվել անվայել է, բայց պակվելուց յետոյ կարելի է ծանօթ լինել և խօսել....

***

Ահա ինչ պէտք է սովորեն մեր հայ օրիորդները։ Մեր կրթված հայուհիները, ընդհակառակն, ում հաւանում են, նրա հետ սառը, հպարտ, մինչև անգամ կոպիտ են լինում, որպէս զի ցոյց տան թէ հարկաւորութիւն չունեն նրա մէջ.... Շատ վատ մեթոդ է....

Եւ այդ պատճառով մեր երիտասարդները, որոնք իրանց կրթութեամբ տարբերվում են մեր նահապետական շրջանից, փախչում են մեր օրիորդներից....

Եւ ճշմարիտ, ինչպէս կարող է մի երիտասարդ սիրել մի օրիորդի, որի հետ մօտիկ ծանօթանալն էլ անհնարին է, որովհետև նրա հետ խօսել անգամ չէ կարելի։ Օրինաւոր կրթված հայ օրիորդին խօսեցնել անկարելի է,—ուրեմն ինչպէս ծանօթանաս նրա հետ....

Ինչքան խօսես,—հայ օրիորդը միշտ լուռ է մնում։ Մարդ չէ իմանում թէ ինչ է մտածում նա, հասկանում է նա քեզ, թէ չէ հասկանում, ճանաչում է նա քեզանից, թէ քո ներկայութիւնը, քո հասարակութիւնը, քո խօսակցութիւնը նրան հաճելի է։ Համակրում է նա քեզ, թէ զզվում է քեզանից, սիրում է քեզ թէ, ատում է....

Վերջապէս ամեն մի կին պէտք է քիչ թէ շատ դերասանուհի լինի և ուրեմն կինը դեռ օրիորդ ժամանակ պէտք է պատրաստվի իր դերին։

Մի օրիորդ մի երիտասարդի հետ, մանաւանդ մի հրապարակական տեղում խօսելու ժամանակ, եթէ նա կարծում է որ գուցէ ժամանակով այդ երիտասարդը կարող է նրա ամուսին դառնալ, պէտք է աչխատի երիտասարդի ամեն մի խօսքին գեղեցիկ ժպիտով պատասխանել, ցոյց տալու համար որ երիտասարդի ամենայիմար խօսքն անգամ նա շատ սրամիտ է գտնում.... Գեղեցիկ կնոջ ժպիտը սաստիկ շողոքորթական է ամեն երիտասարդի համար։

Եւ ժպիտներն էլ զանազան տեսակի են լինում, որոնք բոլորն էլ սաստիկ շողոքորթում են երիտասարդին և շատ հեշտ կերպով պատատում են նրան սիրոյ սարդի ոստայնի մէջ։

Դուք նստած էք, օրինակ, թատրոնում։ Լօժաներից մինի մէջ երևում են չորս անձինք՝ լօժայի առջևի նստարաններում մի օրիորդ և մի երիտասարդ, լօժայի խորքում օրիորդի պառաւ հայրը և մայրը։

Երիտասարդը ինչ որ խօսում է. դուք չէք լսում նրա խօսքերը, բայց օրիորդի ժպիտներից կարող էք մօտաւորապէս եզրակացնել թէ ինչ երգ է երգում երիտասարդը։ Շատ կը սխալվէք, եթէ օրիորդի ժպիտներից եզրակացնէիք, որ երիտասարդը անդադար խելօք և սրամիտ բաներ է ասում.... Ինչքան անհամ, յիմար բաներ էլ ասի երիտասարդը, օրիորդը ժպտում է նախ որ ցոյց տայ թատրոնում նստած ուրիշ օրիորդներին և կանանց որ շատ լաւ է անցկացնում իր ժամանակը, սաստիկ զուարճանում է երիտասարդի հասարակութեան մէջ, և երկրորդ ժպտում է այն նպատակով որ երիտասարդին շողոքորթէ և նրան որսայ, նրան իր վրա սիրահարեցնէ....

Մարդս թոյլ էակ է. նա սիրահարվում է մանաւանդ այն ժամանակ, երբ որ նրան դովում են, նրան շողոքորթում են։

Ուրեմն օրիորդը անդադար ժպտում է փոքր ինչ բացանելով իր թարմ բերանը և ցոյց տալով իր գեղեցիկ ատամները։ Եւ ինչպէս ասացի նրա ժպիտները զանազան տեսակ են լինում։ Նա ժպտում է մի ուրախ, երեխայական զուարթ և քիչ զարմացած դէմք չինելով,—այդ նշանակում է՝ «ինչքան սրամիտ և խելօք ես դու։» Նա ժպտում է դէպի երկինք, կամ աւելի լաւ է ասել դէպի իր լօժայի առաստաղը իր գեղեցիկ, մտածմունքներով լի աչքերը բարձրացնելով,—այդ նշանակում է՝ «ինչքան բարձր, վսեմ, պաշտելի են քո դաղափարները։» Նա ժպտում է կարմրելով և աչքերը ծաց գցելով, այսինքն իր կօշիկների ծայրերի վրա իր հայեացքը կենտրօնացնելով,—այդ նշանակում է՝ «ինչ երջանկութիւն է սպասում ինձ երբ որ ես քո կինը կը դառնամ։»

Նա վերջապէս էլ չէ ժպտում, բայց խոր հոգոց հանելով և իր փոքրիկ ձեռքերից մինը կուրծքի վրա դնելով, կենտրօնացնում է իր թափանցող, խոր հայեացքը երիտասարդի աչքերի մէջ, միայն այս խօսքերը արտասանելով, «ինչպէս շոք է այստեղ, ես հաղիւ կարողանում եմ շունչ քաշել,» և շարունակում է նայել ուղղակի երիտասարդի աչքերին.... այդ նշանակում է՝ «ինձ համար բացի քեզանից ոչինչ չը կայ կեանքի մէջ. ինչպէս կուզենայի փախչել հասարակութենից, յիմար ամբոխից և մենակ քեզ հետ ապրել....»

Ահա, կրկնում եմ, այն արհեստը, որ մեր հայ օրիորդները պէտք է վերջապէս սովորեն, եթէ ոչ,—ուշ կը լինի.... բոլոր հայ երիտասարդները կը սկսեն պակվել օտարուհիների հետ....

***

Այդ արհեստը, որի վրա ես խօսում եմ, սիրելու արհեստ չէ, այլ սիրահարվելու և սիրահարեցնելու արհեստ է։ Այն հասարակութեան մէջ որտեղ ճշմարիտ սիրել չեն իմանում, գոնէ իմանային սիրահարվել և սիրահարեցնել։

Եթէ մեր ծնողները չնորհ չունեն այդ արհեստը իրանց աղջիկներին սովորեցնել, գոնէ այդ պաշտօնը յանձն առնէին մեր օրիորդական դպրոցները։

Բայց մեր օրիորդական դպրոցներն էլ դժբաղդաբար կառավարվում են անտաշ տիրացու վարժապետների և տեսուչների ձեռքով։

Երկու շաբաթ սրանից առաջ գնացի Հալաբարի Մարիամեան օրիորդական դպրոցի տարեդարձին։ Ակտի ժամանակ, օրիորդների երգեցողութենից յետոյ, տեսուչ պ. Աթանասեանց (որի անունն էլ Նահապետ է), բարձրացաւ աթոռի վրա և սկսեց կարդալ մի ճառ, բաւական անկապ կերպով։ Անդադար սխալվելով, մի խօսք միւս խօսքի տեղ դործածելով, ամեն բոպէ կանգնելով և խառնվելով, վերջապէս կարողացաւ այն միտքը արտայայտել, որ օրիորդները, այդ ապագայ ամուսինները և մայրերը պէտք է զարդարվեն ոչ թէ արտաքին շռայլութեամբ, այլ ներքին զարդերով, այն է առաքինութեամբ, բարեպաշտութեամբ և այլն.... կարծես թէ մեր օրիորդներին վանքերի և կուսանոցի է ոչ թէ կեանքի համար ենք պատրաստում....

Պ. Նահապետ Աթանասեանցի բուն նահապետական ճառը լսելով, յիշեցի Թիֆլիսի երեւելի հայր Սրապիոն քահանայի մի քարոզը որ նա ասել էր քանի մի տարի սրանից առաջ մեր ուսումնարաններից մինի վարժուհու դաղաղի վրա, և որի ամենաողբերգական տեղը սա էր. «Այս կինը, սիրելի ժողովուրդ, յայտնի էր ամենքին իր բարեպաշտութեամբ, առաքինութեամբ բարոյականութեամբ և ձեռագործութեամբ....»

Այդ տեսակ քարոզ որքան էլ անմիտ երևար, գոնէ ցոյց է տալիս իր հեղինակի կեանքի վրա ունեցած գործնական հայեացքը....

Եւ հայր-Սրապիոնները բազմաթիւ են մեր հասարակութեան մէջ.... Ահա ուրեմն նրանց իդեալը կնոջ մասին՝ բարեպաշտութիւն և ձեռագործութիւն....

Երևի նոյն թէօրիայի հետևում են մեր հոգևոր դպրոցների հոգաբարձուները երբ իրանց դպրոցների համար տեսուչներ կամ վարժապետներ են որոնում։ Անդադար մեզ պատահում է ստանալ խմբագրութեան մէջ այս տեսակ նամակներ՝ «խնդրում ենք առաջարկել մեր դպրոցի համար բարոյական և ուսումնական մի տեսուչ»

Ուսումնականութիւնը դեռ կարելի է չափել, բայց խեղճերը չեն իմանում որ բարոյականութեան համար անկարելի է չափ ու սահման դնել։

Իմ կարծիքով եղուիտների բարոյականութիւնը այնու ամենայնիւ ամենաբարձր բարոյականութիւն է՝ «նպատակը արդարացնում է միջոցները։»

Գոնէ ես իմ կողմից պատրաստ եմ ամեն միջոցները գործ դնել որպէս զի իմ ֆելիեթոններս կարդացվին։

Նոյնը խորհուրդ եմ տալիս և «Մշակի» խմբագրին....

Ինչքան էլ «Обзоръ», «Тифл. Вѣстн.» և Օդեսայի լրագիրը յարձակվեն պրէմիաների վրա, ես այն համոզմունքի եմ որ հայոց ամբոխի մէջ ընթերցանութիւնը տարածելու համար ամեն միջոցները ներելի են։

Ասիացի

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն Ն Ե Ր

Մամուլի տակից դուրս եկաւ

ՕՐԱՑՈՅՑ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԻ

1879 Թ. համար.

Գինն է 15 կոպ. հարիւրով գնողներին 20% զեջումն կը լինի։ Օտարաքաղաքացիք ճանապարհածախք վճարումն՝ հարիւր օրինակի համար — 1 ր. ,, յիսունի համար — ,, 60 կ.

ՄԵՏԱՔՍԵՂԷՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱԳԱԶԻՆ ԹՈՎՄԱՍ ԽԱՆԴԱՄԻՐՈՎԻ (նախկին ԽԱԼԱԹՈՎԻ) տեղափոխված է Վելյամինովսկայա փողոցի վրա գտնվող Խ ո ս ր ո և վ ի տանից Երևանեան հրապարակի վրա ԽԱՐԱԶՈՎԻ տանը, Թիֆլիսի փոխադարձ կրէդիտի ընկերութեան չինութեան տակ։ Յայտնելով սրա մասին Թիֆլիսի հասարակութեան, մեծայոյս եմ որ նա իր այցելութիւնները չի պակասեցնի իմ մագազինից, համատացած լինելով, որ ինձանից դուրս եկած ապրանքները լաւ յատկութիւններ ունեն և գները չափաւոր են։ 5—6

МАГАЗИНЪ шелковыхъ товаровъ ТОМАСА ХАНДАМИРОВА (бывшій ХАЛАТОВА) перемѣщенъ съ Вельяминовской улицы дома Хосроева на Эриванскую площадь въ домъ ХАРАЗОВА, подъ Тифлисскимъ обществомъ взаимнаго кредита. Объявляя о семъ Тифлисской публикѣ льщу себя надеждою, что она не оставитъ своимъ посѣщеніемъ мой магазинъ съ тою увѣренностью, что отпускаемые мною товары будутъ доброкачественные и цѣны самыя умѣренныя.— 5—6

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ յայտնում է կրպակների, իջևանների և ուտեստի խանութներ պահողներին, որ նոքա պարտաւոր են վերանորոգել ներկայ հոկտեմբերի ընթացքում իրանց առևտրական գործերի վկայականները։ Հակառակ դէպքում նրանց հիմնարկութիւնները կը փակվեն կրպակային հիմնարկութիւնների կանոնադրութեան 17, 18 և 58-դ յօդուածների հիման վրա։ 1—2

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ յայտնում է, որ եկող ընտրութիւնների համար ընտրողական ցուցակները կազմած են և տպած օրինակները յանձնված են բոլոր խմբագրութիւնների քաղաքի բաժանորդներին ուղարկելու համար։ Բացի այդ ցուցակները կարելի է ստանալ վարչութեան մէջ ամենայն օր, բացի կիւրակէ և տօներից, առաւօտեան 10 ժամից մինչև 2։ Միևնոյն ժամանակ վարչութիւնը տեղեկացնում է որ ցուցակների պակասութեան կամ անճշտութեան դէմ նկատողութիւն անել ցանկացողները պարտաւոր են իրանց նկատողութիւնները ներկայացնել վարչութեանը երկու շաբաթվայ ընթացքում յաշւելով այդ ժամանակամիջոցը հոկտեմբերի 11-ից։

Ծախվում ՄԷԿ ՄԵԾ ԵՐԿԱԹԻ ԱՐԿՂ (կասսա) փողի համար։ Գնի համար կարելի է տեղեկանալ Կաթօլիկների եկեղեցու դիմաց Մելիք-Նուբարովի տանը։ 1—5

Մամուլի տակից դուրս եկաւ և վաճառվում է ԿԱՄՍԱՐ ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆՑԻ РУССКОЕ СЛОВО—ՍԿԶԲՆԱԿԱՆ ԴԱՍԱԳԻՐՔ ռուսերէն լեզուի հայ դպրոցների համար, երկրորդ տպագրութիւն, նորանոր յօդուածներով և փոփոխութիւններով լրացրած։ Այս գիրքը հաճութեամբ պ. Թեմական վերատեսչի ընդունված է Վրաստանի և Իմէրէթի վիճակի հայոց բոլոր ծխական ուսումնարաններում։ Սա ընդունված է նոյնպէս Կովկասի և միւս թեմերի ուսումնարաններից շատերում։ Վաճառվում է Թիֆլիսում ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ. կարող են ստանալ և աշխատասիրողից պ. Աբովեանցների խանութում, Կուկիայի կամուրջի վրա, գինն է 40 կոպէկ։ Գումարով առնողներին զեղչումն կը լինի։ Ճանապարհի ծախսը առնողների վրա է։ 1—3

Ցանկանում են յանձնել մի ԲՆԱԿԱՐԱՆ, որ գտնվում է Իրակլեևսկի փողոցի վրա, Բաստամովի տանը երկրորդ յարկում։ 7 մաքուր սենեակներ, խոհանոց և ծառաների սենեակ։ Պայմանների մասին կարելի է իմանալ ԿՈՆՍՏԱՆՏԻՆ ԿՐՈՒԶԻՆՈՎԻՑ, ՈՐ ԲՆԱԿՎՈՒՄ Է ՆՈՅՆ ՏԱՆ ներքին յարկում։ 1—10

ՔԱՐԱԾՈՒԽ „ՌՈՒՍԱՍՏԱՆ" ԸՆԿՏԻՑ (ՀԱՆՔԻՑ), ՈՐ ԳՏՆՎՈՒՄ Է ՁԷԼՕԲԱՆԻ ԱՐՈՒԱՐՁԱՆԻ ԿՈՒՐՍԷՐԱ ԳԻՒՂՈՒՄ

ԸՆԿ. ՆԷՅՄԱՆ—ՀԷՆԻՆԳ

Ծախվում է ՇԷՆԻՆԳԻ ՊԱՎԻԼԻՕՆՈՒՄ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ՄԻԱՍԻՆ ԱՄԲՈՂՋ ՎԱԳՕՆՆԵՐՈՎ ՏՐԿԱԹՈՒՂՈՒ ԿԱՅԱՐԱՆԻՑ ՊՈՒԴԸ 25 ԿՕՊ., ԻՍԿ ՓՈՔՐ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԿԱՐԵԼԻ Է ԳՆԵԼ ՔԱՂԱՔԻ ՄԷՋ ԳՏՆՎՈՂ ՊԱՀԵՍՏԻՑ ՊՈՒԴԸ 28 ԿՕՊԷԿՈՎ։

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

(ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԵՈՒՄ)

Վաճառվում են Բեռլինի կոնգրէսին ներկայացած հայ-պատգամաւորների լուսանկար պատկերները

1. ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ մեծ դիրքով (կաբինէտնիյ) . . . . 60 կ.
2. ԽՈՐԷՆ ՆԱՐԲԷՅ փոքր դիրքով (վիզիտնիյ) . . . . 30 ,
3. ԽՈՒՄԲ վերոյիշեալների իրանց քարտուղարներով . . . . . 60 ,

Օտար քաղաքներից գումարով գնողներին 50 և 25 կ. իւրաքանչիւրը։ 1—3

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

(ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԵՈՒՄ)

Վաճառվում են հետևեալ հայերէն գրքերը

	Ր.	Կ.
1. Ն. Տէր-Ղևոնդեան՝ Մայրենի լեզու. ա. տարի վեցերորդ տիպ.	—	35
2. » » բ. տարի չորրորդ տիպ.	—	40
3. » » գ. և դ. տ. երկր. տիպ.	—	70
4. Ղ. Աղայեանց՝ Ուսումն Մայրենի լեզուի, երրորդ տիպ.	—	15
5. Տէր-Ստեփանեանի՝ Սկզբունք քրիստոնէական հաւատոյ.	—	50
6. Գ. արքեպ. Այվազեան՝ Նախակրթանք գրաբար լեզուի մ. ա. հինգերորդ տիպ.	—	40
7. Տէր-Դաւթեանց՝ Русское Слово	—	35
8. Աբովեանց՝ Հայոց պատմութիւն երկրորդ տիպ.	—	60
9. Հատընտիր ընթերցուածք ի մատենագրաց նախնեաց՝ հանդերձ ծանօթութեամբք Վիէննա Թոռնեան	4	—
10. Թ ո ր ո ս Լ և ո ն ի պատմական վէպ ազգ. կեանքից	1	—

Այս օրերս կը ստանանք Վենետկից Ունձեռն բառարաններ, Հայաստանի քարտէզներ և ընտիր մատենագիրների աշխատութիւններից շատերը։

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 25. — Տ Ե Ղ Ե Կ Ա Ց Ո Յ Ց — ԹԻՖԼԻՍ. 1878.

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ

(Հոկտեմբերի 24-ին)

	Ր.	Կ.
Ո ս կ ի ն (պօլուիմպերիալը)	8	50
Հին 82 պր. մ. արծ. 1000 մ.	1550	—
Հին 20 կ. 72 պր. 1000 „	1260	—
Վիգրիշնի 5% առաջի փոխառութեան տոմ. 100 »	233	—
Երկրորդ 5% վիգրիշնի »	229	—
Մարսելի կուրսը 251½—	100	—
Լօնդօնի կուրսը Օդեսայի վրա.	10	10
Վիեննայի կուրսը ամէ 121 գլ.	100	—
Գաւրեժի բարաթը. . .	5	70
Առևտրական բանկի ակցիան 200 մ. . . .	315	—
Փօթի Թիֆլիսեան երկաթուղու ակցիան 125 մ.	102	—
Շ ա ք ա ր ը բրօցկու . .	7	40
„ միւս տեսակը.	7	35
„ չաքարաւազը .	6	10
„ տրանզիտը. .	6	—
„ մաքուր վճարած	11	—
Բ ա մ բ ա կ ը Երևանու Ամերիկայի սերմից. . .	7	50
Միւս տեսակը հին սերմից.	7	—
Բ ո ւ ր դ ը Թուշի . . .	7	25
„ Թարաքամի .	4	—
Ա լ ի ւ ր Շորագալու . .	1	80
„ Երևանի. . . .	—	—
Գ ա ր ի ն.	1	30
Մ ո մ ը բնաճարպի (стеар.)	12	50
Մ ե տ ա ք ս Նուխվայ . .	210	—
Կ ա խ ե թ ո ւ ն ը. . . .	140	—
Կ ո կ ո ն ը Նուխվայ (բոժ.)	45	—
Ֆ ր ի դ ո ն ը (լասը) Ագուլեաց	55	—
Կ ո ֆ է ն մօկօի. . . .	27	—
„ լիվանի . . .	22	—
„ մարտինկօյինը	18	—

ՀԵՌԱԳԻՐ

	Ր.	Կ.
Կովկասի և Անդրկովկասի քաղաքները . . .	1	
Ռուսաստան .	2	
Աւստրիա. .	3	
Անգլիա. . .	4	
Գերմանիա. .	2	88
Ֆրանսիա . .	3	75

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԴՊՐՈՑ

(Վէրայի վրա № 38)

Ծննդկանների ընդունելութիւնը ցերեկվայ և գիշերվայ ամեն ժամանակ, օրը 50 կոպէկ վարձով, իսկ չքաւորներին անվարձ։ Առանձին սենեակներում ամիսը 30—50 րուբլ։ Կանանց հիւանդութիւնների բաժանմունքի մէջ վարձը ընդհանուր սենեակում 18 րուբլ, իսկ մասնաւոր սենեակներում 30 րուբլ ամսական։

Երեխեկ հիւանդ կանանց և երեխաների ընդունելութիւնը ամեն օր, բացի կիրակի օրերից, 9½ մինչև 11 ժամ առաւօտեան։ Բժշկապետ Անանով։

ՓՕԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Թիֆլիսից մինչև Փօթի (ճանապարհորդների գնացքը) 9 ժամին 21 րօպէ առաւօտեան։ Մինչև Միխայլօվօ (խառն գնացքը) երեկոյեան 5 ժամ. 18 րօպէ։

	առաւօտ.	երեկոյեան
Թիֆլիսից . .	9. 21	5. 18
Գորի . . .	11. 58	9. 43
Միխայլօվօ.	1. 29	11. 57
Բիօն . . .	6. 47	
Փօթի . . .	9. 40	

	առաւօտ.	
Փօթիից . .	9. 13	
Բիօն . . .	12. 13	
Միխայլօվօ.	5. 39	1 37
Գորի. . . .	7. 5	4. 8
Թիֆլիս. . .	9. 31	7. 56

Թիֆլիս գալիս է առաջին գնացքը երեկոյեան 9 ժ. 31 ր. երկրորդը՝ առաւօտեան 7 ժ. 56 ր.

Տ ե ղ ե ր ի գ ի ն ը՝ Թիֆլիսից

	I կլաս.	II կլ.	III կլ.
Մցխէթ .	90	68	38
Գորի. . .	3. 20	2. 40	1. 33
Սուրամ .	5. 22	3. 92	2. 18
Բիօն. . .	9.	6. 75	3. 75
Փօթի . .	13. 1	9. 75	5. 42

ՓՕՍՏ

Ամեն տեսակ թէ նամակներ, թէ լրագիրներ և թէ ծանր փօստ ամեն տեղ ուղարկելու, ընդունվում են ամեն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 1 և կէսօրից յետոյ 3 ժամից մինչև 7։ Իսկ կիրակի օրերը հասարակ նամակներ մինչև 10 ժամ առաւօտեան և 3—7 երեկոյեան։

Ռ ո ւ ս ա ս տ ա ն ի ց և Ա ր տ ա ս ա հ մ ա ն ի ց փօստը ստացվում է Թիֆլիսում ամեն օր։ Բագուի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ օրերը։ Երևանի տրակտից՝ երկուշաբթի, հինգշաբթի և շաբաթ։ Փ օ թ ի-Թ ի ֆ լ ի ս ե ա ն երկաթուղուց ամեն օր։ Նուխու տրակտից՝ չորեքշաբթի և կիրակի։ Բ ե լ ի կ լ ի ւ չ ի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ։

ՆԱՄԱԿՆԵՐ	կոպ.
Բաց նամակը արժէ .	4
Ռուսաստան և Եւրօպայի բոլոր երկիրները նամակը արժէ	8
Ամերիկա	8
Պարսկաստան . . .	8
Հնդկաստան . . .	70
Եգիպտոս . . .	27

ԲԺՇԿԱՆՈՑ

Հիւանդների ընդունելութիւնը ժամը 9-ից մինչև 1 ժամը կէսօրից յետոյ։

Ե ր կ ո ւ շ ա բ թ ի. Լիսիցեվ և Գօրալեվիչ ներքին հիւանդութիւններ, Բակստ վեներական և կաշու հ., Քուչարեանց վիրաբուժական և կանանց հիւանդութիւններ։

Ե ր ե ք շ ա բ թ ի. Վէրմիշեվ ներքին հ., Մինկեվիչ վիրաբուժական հ., Բակստ կուրծքի և ներվային հ., Ա. Բախուտով կանանց, երեխաների հ. և մանկաբարձութեան. Բէյխ աչքի հ.։

Չ ո ր ե ք շ ա բ թ ի. Լիսիցեվ ներքին հ., Բակստ վեներական և կաշու հ.։

Հ ի ն գ շ ա բ թ ի. Վէրմիշեվ ներքին հ., Քուչարեանց սիֆիլիտական և միզային գործարանների։

Ո ւ ր բ ա թ. Լիսիցեվ ներքին հ. Բակստ կրծքային և ջղային հ., Ա. Բախուտով կանանց և երեխաների հ. և մանկաբարձութեան։

Շ ա բ ա թ. Վէրմիշեվ ներքին հ., Մինկեվիչ վիրաբուժական հ., Բակստ վեներական և կաշու հ., Բէյխ աչքի հիւանդութիւններ։

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—ՓԱՐԻԶ. Ա. Ա. Ստացանք յօդուածը։ Կը տպենք հետևեալ համարների մէջ։

—ՐՕՍՏՕՎ (Դօնի վրա). Բ. Օրերումս ձեզ մի նամակ ուղարկեցինք

—ԲԱԳՈՒ. Կասպիացի. Ստացանք նամակը, կը տպենք հետևեալ համարներից մէկի մէջ։ Շարունակեցէք այդ ձևով գրել, առաջին նամակը լաւ է։

—ԴԱՀԱՐԼԻ. Տ. Մ. Այն ինչ որ դուք գրում էք հայր Դ.-ի մասին բոլորովին չէ ցոյց տալիս, որ նա մի պախարակելի անձնաւորութեն է։ Աշխատանքը ամեն կոչումի համար լաւ է և երբէք ամօթ չի բերի մի քահանայի։

—Կ. ՊՕԼԻՍ. Ս. Մ. Ձեր եղբօր մասին մենք ոչինչ տեղեկութիւն չունենք։

Дозволено Цензурою 24 Октября 1878 г. Тифлисъ — Типографія Мартиросіанца — Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ